ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 59 66 59, քարտուղարություն հեռ.՝ 59 61 25

№ 2/5-1-351 «11» 02 2015թ.

Ձեր

Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար պարոն Էդվարդ Նալբանդյանին

Հարգելի պարոն նախարար

Ի կատարումն ՀՀ վարչապետի 04.02.2015թ. թիվ 02/12.3/1340-15 հանձնարարականի հայտնում եմ, որ ՀՀ ԿԱ ոստիկանությունում ամփոփվել են ՀՀ ֆինանսների, ՀՀ տրանսպորտի և կապի, ՀՀ արտաքին գործերի, ՀՀ արդարադատության նախարարությունների և ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայության կարծիքները՝ «Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների միջև ծառայողական և քաղաքացիական զենքի տեղաշարժման մասին» Համաձայնագրի նախագծի վերաբերյալ:

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունը և ՀՀ ԿԱ ազգային անվտանգության ծառայությունը նախագծի վերաբերյալ առարկություններ և առաջարկություններ չունեն:

ՀՀ ոստիկանությունն ընդունելի է համարում ՀՀ ֆինանսների, ՀՀ արտաքին գործերի և ՀՀ արդարադատության նախարարությունների կարծիքները:

ՀՀ ոստիկանության առաջարկությունները 02.02.2015թ. թիվ 2/5-1-241 գրությամբ ներկայացվել են ՀՀ արտաքին գործերի նախարարություն:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից սահմանված ժամկետում կարծիք չի ստացվել:

Այլ առարկություններ և առաջարկություններ չկան:

Միաժամանակ Ձեզ է ներկայացվում «Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների միջև ծառայողական և քաղաքացիական զենքի տեղաշարժման մասին» Համաձայնագրի կնքման նպատակահարմարության մասին տեղեկանքը:

Առդիր՝ ՀՀ շահագրգիռ նախարարություններից և գերատեսչություններից ստացված կարծիքները՝ «9» թերթ:

Հարգանքով,

Գեներալ-լեյտենանտ **Վլադիմիր Գասպարյան**

01265

12 FEB 2015

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների միջև ծառայողական և քաղաքացիական զենքի տեղաշարժման մասին» Համաձայնագրի կնքման նպատակահարմարության մասին

Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության կառավարությունները հիմնվելով՝ 2007թ. հոկտեմբերի 6-ի «Միասնական մաքսային տարածքի ստեղծման և մաքսային միության ձևավորման մասին» և 2011թ. նոյեմբերի 18-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մասին» Պայմանագրերի վրա, ելնելով վերոնշյալ պետությունների հասարակական անվտանգության և ազգային շահերից, ցանկություն են հայտնել կնքել «Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների միջև ծառայողական և քաղաքացիական զենքի տեղաշարժման մասին» Համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր):

Սույն Համաձյանագրի կնքումը Կողմերին հնարավորություն կտա կարգավորել ծառայողական և քաղաքացիական զենքի տեղաշարժի և ներքին տարանցման հետ կապված հարաբերությունները, ինչպես նաև այդպիսի տեղաշարժի նկատմամբ հսկողության հետ կապված իրավասու մարմինների միջև փոխգործակցությունը:

Սույն Համաձայնագիրը չի տարածվի արտահանման հսկողությանը վերաբերող հարաբերությունների վրա:

Սույն Համաձայնագրի գործողությունը կտարածվի.

– ծառայողական և քաղաքացիական զենքի տեղաշարժ և ներքին տարանցում իրականացնող իրավաբանական անձանց վրա,

– քաղաքացիական զենքի տեղաշարժ և ներքին տարանցում իրականացնող՝ որպես ձեռնարկատիրական գործունեության սուբյեկտ (այսուհետ՝ անհատ ձեռնարկատերեր) գրանցված ֆիզիկական անձանց վրա, որոնք իրականացնում են նշված գործունեությունը, եթե դա նախատեսված է Կողմ պետության օրենսդրությամբ,

– անձնական նպատակով քաղաքացիական զենքի տեղաշարժ և ներքին տարանցում իրականացնող ֆիզիկական անձանց վրա:

Համաձայնագրի կնքումը Կողմ պետություններին հնարավորություն կընձեռի պետական հսկողություն իրականացնել ծառայողական և (կամ) քաղաքացիական զենքի տեղափոխման և ներքին տարանցման նկատմամբ՝ սույն Համաձայնագրին և Կողմ պետությունների օրենսդրությանը համապատասխան, ինչպես նաև սահմանել ծառայողական և քաղաքացիական զենքի տեղափոխման և ներքին տարանցում իրականացնելու դեպքերը:

Ելնելով վերոգրյալից ՀՀ ոստիկանությունը նպատակահարմար է գտնում «Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների միջև ծառայողական և քաղաքացիական զենքի տեղաշարժման մասին» Համաձայնագրի կնքումը:

ՀՀ ոստիկանության պետ,
գեներալ-լեյտենանտ **Վլադիմիր Գասպարյան**

«11» 02 2015թ.